ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

,_____,_____2010թ. N_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ Հ.33/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի №55-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետը և հաշվի առնելով, որ <<Գրիար-Սպասարկում>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը լիազորագրային կառավարման հիմունքներով իրականացնում է Ամիրյան փողոցի հ.4/6 հասցեում գտնվող բազմաֆունկցիոնալ համալիրի սպասարկման, այդ թվում նաև ջեռուցման և տաք ջրի մատակարարման ծառայություններ, և այն հանգամանքը, որ <<Գրիար>> փակ բաժնետիրական ընկերությունը տվել է իր համաձայնությունը՝ Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող կաթսայատան համար Երևանի քաղաքապետարանի հետ 29.07.2010թ. կնքված անհատույց օգտագործման հ.06/6-ԱԳ պայմանագիրը լուծելու, սահմանված կարգով ընկերության իրավունքը դադարեցնելու, և կաթսայատունը մշտական օգտագործման իրավունքով <<Գրիար-Սպասարկում>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոխանցելու վերաբերյալ և վերջինիս 2010 թվականի դեկտեմբերի 7-ի հ.12-ի գրությունը.

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը համարվող Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող՝ 02.03.2010թ. տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման հ.2277777 վկայականում նշված 225.2քմ մակերեսով նկուղը և 1-ին հարկի 106.6քմ մակերեսով հ.1 սենյակը (կաթսայատան համար նախատեսված մասը) անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով հանձնել <<Գրիար-Սպասարկում>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ այն ըստ նպատակային նշանակության օգտագործելու համար:

2. Սույն որոշման 1-ին կետը ուժի մեջ է մտնում <<Գրիար>> փակ բաժնետիրական ընկերության հետ 29.07.2010թ. կնքված ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման հ.06/6-ԱԳ պայմանագիրը սահմանված կարգով լուծելուց և ընկերության օգտագործման իրավունքը նշված գույքի նկատմամբ դադարեցնելուց հետո:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ Հ.33/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու վերոհիշյալ որոշման նախագծի կազմման համար հիմք է հանդիսացել <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 110-րդ հոդվածի 2-րդ կետը, ինչպես նաև <<Գրիար>> փակ բաժնետիրական ընկերության համաձայնությունը՝ Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող կաթսայատան համար Երևանի քաղաքապետարանի հետ 29.07.2010թ. կնքված անհատույց օգտագործման հ.06/6-ԱԳ պայմանագիրը լուծելու, սահմանված կարգով ընկերության իրավունքը դադարեցնելու, և կաթսայատունը մշտական օգտագործման իրավունքով <<Գրիար-Սպասարկում>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոխանցելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ <<Գրիար-Սպասարկում>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը լիազորագրային կառավարման հիմունքներով իրականացնում է Ամիրյան փողոցի հ.4/6 հասցեում գտնվող բազմաֆունկցիոնալ համալիրի սպասարկումը, այդ թվում նաև ջեռուցման և տաք ջրի մատակարարման ծառայություններ, նշված գույքն արդյունավետ օգտագործելու նպատակով նպատակահարմար է այն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել <<Գրիար-Սպասարկում>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

<<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 18-րդ մասի պահանջներից ելնելով նախապատրաստվել է <<Երևանի Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող կաթսայատունը անհատույց օգտագործման հանձնելու մասին>> Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ Հ.33/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող կաթսայատունը անհատույց օգտագործման հանձնելու մասին>> որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ Հ.33/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող կաթսայատունը անհատույց օգտագործման հանձնելու մասին>> որոշման ընդունման առնչությամբ Երևան համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ